



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ  
ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Կիրակի, 23 Մարտին, Զրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնին առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի:

Թեմիս բարեշան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Ս. Պատարագ պիտի մատուցէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ եւ Ս. Չատկուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ:

Օրէնճ Զառնթիի Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Գերշ. Տ. Սուրեն Արք. Գաթարոյեան:

Էսսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցոյ մէջ՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցոյ մէջ՝ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

**PRELATE TO CELEBRATE EASTER DIVINE LITURGY  
AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE**

On Easter Sunday, March 23<sup>rd</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Mary's Church in Glendale.

H.E. Archbishop Suren Kataroyan will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church in Orange County and H.E. Archbishop Yeprem Tabakian will celebrate Easter Liturgy and deliver the sermon at Holy Martyr Church in Encino.

Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barhev Gulumian will conduct services at Holy Cross Cathedral in Montebello and Holy Trinity Church in Fresno respectively.

## **ՄԵՌԵԼՈՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՅԱԼԳԻՍ ԳԵՐԵՉՄԱԿԱՆՏՈՒՆԵՐՈՒ ՄԷՋ**

Ս. Չատուրյան Տօնին առիթով, եւ համաձայն տարիներու աւանդութեան, ի յիշատակ համայն ննջեցելոց ազգիս հայոց, Երկուշաբթի, Մարտ 24-ին, առաւօտեան ժամը 10-ին, Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան Hall of Liberty սրահին մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր:

Նմանապէս հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Forest Lawn գերեզմանատան Church of Recessional եկեղեցւոյ մէջ: Արարողութեանց պիտի մասնակցին Թեմիս Հոգեւորականաց Դասու անդամները:

### **PRELATE TO PRESIDE OVER EASTER MEMORIAL DAY REQUIEM SERVICE AT FOREST LAWN**

On Monday, March 24<sup>th</sup>, Easter Memorial Day requiem services will take place at Forest Lawn Memorial Park in Hollywood Hills, at 10:00 a.m. The Prelate will preside over the service.

Requiem service will also take place at the Church of the Recessional at Forest Lawn Memorial Park in Glendale conducted by clergy members.

### **Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ**

Արեւմտեան մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Ս. Յարութեան Տօնին առիթով, Երեքշաբթի, 25 Մարտի առաւօտեան, Ս. եւ Ամմահ Պատարագ պիտի մատուցուի «Արարատ Տան» Միշըն Հիլզի համալիրի մատրան մէջ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր եւ ներկայութեամբ Թեմիս հոգեւորականաց Դասու անդամներուն:

Առաւօտեան ժամը 10-ին, հոգեւորականաց դասը նախ պիտի այցելէ «Արարատ Տան» հիւանդանոցի բաժինը: Իսկ ժամը 10:30-ին, մատրան մէջ, Ս. Պատարագ պիտի մատուցէ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան:

Յայտնենք, որ Հինգշաբթի, 13 Մարտի առաւօտեան, «Արարատ Տան» Eagle Rock-ի հիւանդանոցին մէջ, ժամերգութիւն կատարեց Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան:

### **EASTER DIVINE LITURGY AT ARARAT HOME**

On the morning of Tuesday, March 25<sup>th</sup>, the Prelate will preside over Easter Divine Liturgy at Ararat Home in Mission Hills. Clergy members will participate in the service.

At 10:00 a.m. clergy members will visit the nursing facility of Ararat Home. Divine Liturgy will be celebrated by Very Rev. Fr. Muron Aznikian at 10:30 a.m. in the Chapel.

Morning services were offered at the Convalescent Hospital of the Eagle Rock campus of Ararat Home on the morning of Thursday, March 13<sup>th</sup>, by Rev. Fr. Vazken Atmajian.

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին Կիրակի, 16 Մարտին նշեց Ծաղկազարդը՝ Զրիստոսի Երուսաղեմ մուտքի տօնը: Այս առիթով, մեր թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցան Ս. Պատարագ, Դռնբացէքի արարողութիւն եւ Ծաղկազարդի տօնը յատկանշող՝ մանուկներու թափօր, որ այլապէս մօտալուտ գարնան անտիպը կը բերէր:



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան այս առիթով Ս. Պատարագ մատուցանեց ու քարոզեց Էնսիւնյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ: Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Յիսուսի Երուսաղեմ մուտքի յաղթական դէպքին ու անոր բովանդակած բազմախորհուրդ պատգամին, ինչպէս նաեւ՝ Ղազարոսի յարութեան հրաշքին: Ան շեշտեց, որ Ղազարոս Յիսուսի սերտ բարեկամն էր ու արժանացած էր

անոր սիրոյն, հետեւաբար՝ յորդորեց, որ մենք եւս պէտք է մասնք Աստուածորդւոյն բարեկամներն ու Անոր ուղիին հետեւորդները, որպէսզի արժանանանք անոր պարգեւներուն: Առաջնորդ Սրբազանը նաեւ խօսեցաւ Տաճարի մաքրագործման արարքին եւ անոր խորհուրդին մասին, ընդգծելով, որ միջոցները պէտք չէ շփոթել նպատակի հետ, ոչ ալ միջոցները վերածել նպատակի, հետեւաբար՝ յորդորեց տեր կանգնիլ մեր հոգեւոր ու ազգային նկարագիրին ու յառաջիկայ տօնական օրերը դիմաւորել մաքուր հոգիով ու քրիստոնէական մեր հաւատքին հաւատարմութեամբ:

Ս. Պատարագի անարտին, տեղի ունեցաւ մանուկներու թափօր, որ սրտառուչ պատկեր մը պարզեց հաւատացեալներուն աչքերուն դիմաց: Առաջնորդ Սրբազանը օրհնեց մանուկները, անոնց ծնողներն ու թափօրին մասնակցող հաւատացեալները:

## CELEBRATION OF PALM SUNDAY

On Sunday, March 16<sup>th</sup>, Prelacy Churches celebrated Palm Sunday with Divine Liturgy, the children's procession, and the Liturgy of the Opening of the Portals.



On this feast, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino. In his sermon the Prelate spoke of the triumphant entry of our Lord Jesus Christ into Jerusalem and the significance of that event. In speaking of the raising of Lazarus from the dead, the Prelate stressed that Lazarus was a loyal friend of Jesus

Christ and had become worthy of His love, urging the faithful to remain loyal followers of Christ so that we may also be worthy of His blessings.

The Prelate then referred to the implication behind Jesus entering and clearing the temple, emphasizing that we must remain faithful to our spiritual and cultural values and prepare to celebrate the upcoming Feast of Easter with sanctity and faithfulness.

Following Divine Liturgy and the children's procession, the services concluded with the Prelate conducting the Liturgy of the Opening of the Portals.

## ՏԱՍԸ ԿՈՒՍԱՆԱՅ ՏՕՆԸ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Ս. Յարութեան տօնը կանխող Աւագ շաբթուան իւրաքանչիւր օրը կը մարմնաւորէ Աստուածորդւոյն երկրաւոր կեանքի վերջին հանգրուանին ու պատգամներուն տարբեր դրուագները:

Աւագ Երեքշաբթին նուիրուած էր Տասը Կոյսերու առակին: Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ երեկոյեան յատուկ ժամերգութիւն եւ մեր հոգեւոր հայրերը վեր առին այս առակին խորհուրդը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ արարողութեան:

Ժամերգութեան մասնակցութիւն բերին Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներէն 10 պարմանուհիներ, իբրեւ ներկայացուցիչները տասը կոյսերուն:



Այս առիթով իր ուղղած պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը անդրադաձաւ հինգ իմաստուն ու հինգ անմիտ կոյսերու օրինակին եւ ընդգծեց, որ հաւատացեալ քրիստոնեային պարտականութիւնն է ըլլալ արթուն, որպէսզի Տիրոջ կողմէ ընծայուած պարգէւները աչքաթող չըլլան ու առիթները չկորսուին: Ան աղօթեց, որ Տէրը մեզի իմաստուն կոյսերուն նման իմաստութիւն շնորհէ եւ արժանի ընէ իր շնորհներուն:

## COMMEMORATION OF THE PARABLE OF THE TEN MAIDENS

On the evening of Tuesday, March 18<sup>th</sup>, Holy Tuesday services took place in Prelacy Churches commemorating the Parable of the Ten Maidens. The Prelate conducted services and conveyed his message on this occasion at St. Garabed Church in Hollywood. Sunday School students from the parish participated in the service representing the ten maidens.

The Prelate spoke of the example of the five wise maidens, emphasizing that it is the responsibility of each faithful Christian to be alert as they were so that we don't fail to notice the blessings granted to us by Almighty God. The Prelate concluded by praying for God to grant us all wisdom of the five wise maidens so that we may also become worthy of the Lord's blessings.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՈՏԵԼՈՒՄՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Աւագ Շաբթուան Հինգշաբթին մեր եկեղեցւոյ արարողական կեանքի ամենէն խորհրդաւոր եւ նուիրական օրն է. Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատում, ՈՊտնլւոյ եւ կարգ խաւարման: Ինչպէս ծանօթ է, իր մատնութենէն քանի մը ժամ առաջ, Յիսուս վերնատան մէջ իր աշակերտներուն հետ ունեցաւ վերջին ընթրիքը, որուն ընթացքին մեծ օրինակ տուաւ՝ անոնց առջեւ խոնարհելով ու անոնց ոտքերը լուալով:



Հինգշաբթի օր, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ս. Հաղորդութեան Պատարագ, իսկ յետմիջօրէին, Ոտնլուայի արարողութիւն, որուն ընթացքին, մեր հոգեւոր հայրերը հետեւեցան Քրիստոսի օրինակին ու կատարեցին դպիրներու ոտքերու լուացում:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ոտնլուայի արարողութիւն կատարեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Այս առիթով իր արտասանած քարոզին մէջ, ան պատգամեց, որ քրիստոնեայ հաւատացեալը պարտի հետեւիլ Աստուածորդւոյն հեզութեան,

խոնարհութեան ու ծառայասիրութեան օրինակին: Ան շեշտեց, որ Յիսուս, Աստուածորդի ըլլալով հանդերձ, չունէր իշխողի ու հրամայողի ընթացք, այլ խոնարհ էր ու հեգահամբոյր, գիտակից՝ մարդուն մեղքերու քաւութեան համար զոհաբերուելու իր առաքելութեան: Ան ծանօթ էր մինչեւ իսկ Յուդայի կատարելիք մատնութեան, սակայն զայն չզրկեց իր այս ծառայութենէն, անոր բաժին հանելով իր մարմինը խորհրդանշող գինեթաթախի հացէն:

## ԽԱՒԱՐՈՒՄ

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը Էնսիևոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Խաւարման գիշերի արարողութեան, եւ Յիսուսի մատնութեան, ձերբակալութեան ու չարչարանքներուն անդրադարձող պատգամ մը ուղղեց ներկայ հաւատացեալներուն:

## MAUNDY THURSDAY COMMEMORATIONS

On Thursday, March 20<sup>th</sup>, Maundy Thursday services took place in Prelacy churches beginning with Divine Liturgy in the morning, followed by the Washing of the Feet service in the afternoon where clergy members conducted the ceremony of the Washing of the Feet to commemorate the humility of our Lord Jesus Christ during the Last Supper.



H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted the service at St. Mary's Church in Glendale and delivered the sermon in which he exhorted that all faithful Christians must follow in the example set by Christ of humility and service. He asserted that although He was the Son of God, He remained humble and mindful of the fact that He was sent on a mission to redeem

the sins of mankind and did not even deprive Judas, who would later betray Him, of participating in His ministry.

In the evening, the Prelate conducted the solemn vigil service and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino during which the betrayal and arrest of Jesus Christ was commemorated.

## ՄԱՐԻՆԱ ՄԱՒԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ՝ «Տ. ԵՒ 2. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ» ՍՐԱՅԻՆ ՄԷՋ

Մարտի վերջին շաբաթավերջին, մեր գաղութի արուեստասերները առիթը պիտի ունենան հաղորդակից դառնալու իւրայատուկ

արուեստագետի մը ստեղծագործական աշխարհին: Արդարեւ, Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանը կազմակերպած է իտալաբնակ Մարինա Մաւեանի արուեստի գործերուն՝ գեղանկարչական ցուցահանդէս մը, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 28 եւ Շաբաթ, 29 Մարտ 2008ին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ:

Չուցահանդէսը կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ եւ կը վայելէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Արուեստագետը՝ Մարինա Մաւեան, յատկապէս հրաւիրուած է Իտալիայէն, ցուցադրելու համար իր պաստառները:

Մ. Մաւեանի ներշնչման աղբիւրները մեր մշակութային դարաւոր ժառանգութիւններն ու, որոնք արուեստագետին վրձինով կը զգեսուն որոշ արդիականութիւն: Ան մանրանկարներու, ճեպանկարներու եւ գրաչգրութեան արուեստի սոսկական վերարտադրող մը չէ, այլ անոնց խորհուրդէն ու հարստութիւններէն իր քաղած ներշնչումները պաստառ կը փոխադրէ իր հոգիին պրիսմակէն անցընելէ ետք. ակնդիրը դժուարութիւն պիտի չունենայ զգալու եւ տեսնելու, որ այս արուեստագետը հաւատացեալ հայուհի մըն է, որուն հոգիին ու ներաշխարհին մէջ տիրական տեղ կը գրաւեն մեր հինաւորց արուեստի ոգեղէն ժառանգութիւնները:

Չուցահանդէսին բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 28 Մարտի երեկոյեան ժամը 7-ին: Ցուցահանդէսը բաց պիտի մնայ Շաբաթ, 29 Մարտի առաւօտեան ժամը 11էն մինչեւ երեկոյեան ժամը 7:

Արուեստագետին աշխարհին մասին գաղափար մը կազմելու համար, կարելի է այցելել անոր կայքէջը՝ [www.marinamavian.it](http://www.marinamavian.it).

## **ARTIST MARINA MAVIAN TO EXHIBIT HER WORKS AT THE PRELACY “DIKRAN AND ZAROUHIE DER GHAZARIAN” HALL**

The Western Prelacy Outreach Committee, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has invited artist Marina Mavian from Italy to exhibit her works at the Prelacy. The exhibition will open on Friday, March 28<sup>th</sup>, 2008 at 7:00 p.m. and will continue on Saturday, March 29<sup>th</sup>, from 11:00 a.m. to 7:00 p.m.

The artist is inspired by her faith in her paintings which consist primarily of religious subjects, particularly Armenian Churches of the fifth and sixth centuries as well as saints and crosses. For more information on the artist and to view a sample of her works please visit her website at [www.marinamavian.it](http://www.marinamavian.it).